ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

առաջնորդվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով,

ձգտելով նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման բնագավառում իրականացնել համաձայնեցված, համակարգված քաղաքականություն,

ցանկանալով ապահովել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում ապրանքների օրինական շրջանառությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը և նրանց մոլորության մեջ գցող գործողությունների կանխումը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ նշանակությունը.

նույնականացման միջոցների միասնական ռեեստր՝ ընդհանուր տեղեկատվական ռեսուրս, որը ներառում է Միությունում ապրանքների դրոշմավորման համար օգտագործվող նույնականացման միջոցների նկարագիրը, տեղեկություններ դրանց բնութագրերի, նույնականացման միջոցներում պարունակվող տեղեկատվության բովանդակության ու կառուցվածքի վերաբերյալ.

անդամ պետության իրավասու (լիազորված) մարմիններ՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմիններ, որոնք, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, լիազորված են ապահովելու այն ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողությանն ուղղված գործունեության վերահսկողությունը և (կամ) անդամ պետության գործադիր իշխանության մարմինների գործունեության միջգերատեսչական համակարգումը, որոնց առնչությամբ որոշում է ընդունվել նույնականացման միջոցներով դրանց դրոշմավորման վերաբերյալ, և (կամ) ապահովելու ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչի աշխատանքները և (կամ) դրա աշխատանքների ապահովմանն ուղղված գործունեության համակարգումը.

հսկիչ (նույնականացման) նշան՝ խիստ հաշվետվության ձևաթուղթ (փաստաթուղթ)՝ կեղծումից պաշտպանության տարրերով (միջոցներով), (պաշտպանված պոլիգրաֆիական արտադրանք), որը պարունակում է նույնականացման միջոց և նախատեսված է ապրանքների դրոշմավորման համար.

դրոշմավորված ապրանքներ՝ ապրանքներ, որոնց վրա սահմանված պահանջների պահպանմամբ զետեղված են նույնականացման միջոցներ, և որոնց վերաբերյալ հավաստի տեղեկությունները (այդ թվում՝ դրանց վրա զետեղված նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների վերաբերյալ տեղեկությունները) ներառված են ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչի մեջ.

նյութական կրիչ՝ հսկիչ (նույնականացման) նշան կամ ցանկացած նյութից օբյեկտ, որը պարունակում է կամ չի պարունակում կեղծումից պաշտպանության տարրեր (միջոցներ) և նախատեսված է նույնականացման միջոցի զետեղման, պահպանության և փոխանցման համար.

ապրանքների շրջանառություն՝ Միության մաքսային տարածք ապրանքներ ներմուծելը, անդամ պետությունների տարածքներում ապրանքները պահպանելը, փոխադրելը, ստանալը և փոխանցելը, այդ թվում՝ դրանք ձեռք բերելն ու իրացնելը (վաճառելը).

մեծածախ առևտուր՝ առևտրային գործունեության տեսակ, որը կապված է ապրանքներ ձեռք բերելու և վաճառելու հետ՝ դրանք ձեռնարկատիրական գործունեության մեջ (այդ թվում՝ վերավաճառքի համար) կամ անձնական, ընտանեկան, կենցաղային և այլ նմանատիպ օգտագործման հետ կապ չունեցող այլ նպատակներով օգտագործելու համար.

դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդներ՝ ապրանքներ, որոնց մասով ընդունվել է որոշում դրոշմավորում սահմանելու վերաբերյալ, և որոնք դրոշմավորում սահմանելու օրվա դրությամբ գտնվում են այդպիսի ապրանքների արտադրություն և (կամ) շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձանց (այսուհետ՝ անհատ ձեռնարկատերեր) տիրապետման և (կամ) օգտագործման և (կամ) տնօրինման տակ.

մանրածախ առևտուր՝ առևտրային գործունեության տեսակ, որը կապված է ապրանքների ձեռքբերման և վաճառքի հետ՝ դրանք անձնական, ընտանեկան, կենցաղային նպատակներով և ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող այլ նպատակներով օգտագործելու համար.

նույնականացման միջոց՝ համակարգչի կողմից ընթեռնելի

պայմանանշանների բացառիկ հաջորդականություն, որը ներկայացված է ստվերագծային ծածկագրի ձևով կամ ձայնագրված է ռադիոհաճախականության պիտակի վրա կամ ներկայացված է ավտոմատ նույնականացման այլ միջոցի (տեխնոլոգիայի) օգտագործմամբ.

անդրսահմանային առևտուր՝ մեծածախ առևտուր, որն իրականացվում է մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների փոխադարձ առևտրի շրջանակներում.

թողարկողներ՝ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմիններ և (կամ) կազմակերպություններ, որոնք իրականացնում են նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների պատրաստում և (կամ) վերարտադրում և (կամ) իրացում (վաճառք):

Սույն Համաձայնագրում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով և Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 2

1. Սույն Համաձայնագիրը սահմանում է Միության շրջանակներում նույնականացման միասնականացված միջոցներով ապրանքների դրոշմավորման կարգը (այսուհետ՝ ապրանքների դրոշմավորում):

2. Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է այն ապրանքների արտադրությունը և (կամ) շրջանառությունն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա, որոնց առնչությամբ ընդունվել է որոշում դրոշմավորում սահմանելու վերաբերյալ, ինչպես նաև՝ թողարկողների վրա:

Հոդված 3

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի (այսուհետ՝ Հանձնաժողովի խորհուրդ) որոշմամբ Միության շրջանակներում կարող է սահմանվել ապրանքների դրոշմավորում:

2. Հանձնաժողովի խորհուրդն ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ որոշումն ընդունում է անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված առաջարկների (հիմնավորմամբ), ապրանքների դրոշմավորում սահմանելու նպատակահարմարության վերլուծության (ներառյալ անդամ պետության՝

դրոշմավորում սահմանելուց ակնկալվող արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, այդպիսի ապրանքների հիմնական սպառողներին կամ սպառողների խմբերին նշումը), բիզնես իրականացնելու պայմանների վրա դրոշմավորում սահմանելու ազդեցության վերաբերյալ տեղեկատվության (ներառյալ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հնարավոր ծախսերի վերաբերյալ տեղեկությունները, ապրանքի գնի և նույնականացման միջոցի արժեքի հարաբերակցությունը), այդպիսի ապրանքների դրոշմավորման տեխնիկական հնարավորության առկայության, ինչպես նաև այդպիսի ապրանքների մասով գործող՝ ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողության այլ համակարգերի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

3. Ապրանքները դրոշմավորվում են դրանց և (կամ) դրանց փաթեթի վրա նույնականացման միջոցներ կամ նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչներ զետեղելու եղանակով:

4. Ապրանքների, դրանց փաթեթի կամ կեղծումից պաշտպանության տարր (միջոց) չպարունակող նյութական կրիչի վրա նույնականացման միջոցների զետեղման եղանակով ապրանքների դրոշմավորումը թույլատրվում է միայն նույնականացման ապօրինի միջոցներով դրոշմավորված ապրանքներն օրինական շրջանառության մեջ գտնվելու հնարավորությունը բացառող պայմաններ ստեղծելու դեպքում:

5. Նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է նույնականացման միջոցների միասնական ռեեստր, որի ձևավորումն ու վարումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից՝ էլեկտրոնային եղանակով: Նույնականացման միջոցների միասնական ռեեստրի ձևավորման և վարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 4

Ապրանքների դրոշմավորում սահմանելու օրվանից՝

արգելվում են դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված ապրանքների պահպանումը, փոխադրումը, ձեռքբերումն ու իրացումը (վաճառքը) անդամ պետությունների տարածքներում՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում մաքսային հսկողության գոտիներում մաքսային հսկողության ներքո գտնվող այդպիսի ապրանքները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանելու նպատակով ձեռքբերման և իրացման (վաճառքի), դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված ապրանքները սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան սահմանված պահեստային տարածքներ փոխադրման, այդ տարածքներում նշված ապրանքների պահպանության դեպքերի, ինչպես նաև

բացառությամբ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում նշված ապրանքների: Թույլատրվում են ապրանքների չդրոշմավորված մնացորդների պահպանումը, փոխադրումը, ձեռքբերումն ու իրացումը (վաճառքը) այն դեպքերում, երբ ապրանքների մնացորդների դրոշմավորում նախատեսված չէ.

Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների դրոշմավորումն իրականացվում է նախքան այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելը, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նախքան այդ ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելը, բացառությամբ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում նշված ապրանքների: Ապրանքների դրոշմավորումը կարող է իրականացվել սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան սահմանված պահեստային տարածքներում ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո, եթե այդպիսի դրոշմավորման հնարավորությունը նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ.

թույլատրվում է ապրանքների դրոշմավորումը Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս.

ապրանքների դրոշմավորումը դրոշմավորման ենթակա ապրանքների արտադրություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվում է նախքան դրանք փոխադրելը և (կամ) իրացման (վաճառքի) համար առաջարկելը, այդ թվում՝ իրացման (վաճառքի) վայրում դրանք ներկայացնելը, իրացման (վաճառքի) վայրում դրանց նմուշները ցուցադրելը կամ դրանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրելը՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում նշված ապրանքների: Դրոշմավորումը կատարվում է դրանց արտադրության, փաթեթավորման (վերափաթեթավորման) և պահպանության վայրերում:

Հոդված 5

1. Ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հանձնաժողովի խորհուրդն սահմանում է այդպիսի ապրանքների ցանկ՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) համապատասխան նշելով դրանց ծածկագրերը, և միաժամանակ որոշում է.

ա) նույնականացման միջոցները, դրանց բնութագրերը, վերարտադրման կարգը, ինչպես նաև այն տեղեկատվության բովանդակությունն ու կառուցվածքը, որը պետք է ներառված լինի նույնականացման միջոցներում՝ նույնականացման

միջոցների միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների հիման վրա (դրանց առկայության դեպքում).

բ) ապրանքների դրոշմավորում սահմանելու ամսաթիվն ու դրոշմավորման կարգը.

գ) դրոշմավորված ապրանքների վերաբերյալ այն տեղեկությունների ձևաչափը, բովանդակությունն ու կառուցվածքը, որոնք փոխանցվում են անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջև և անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների ու Հանձնաժողովի միջև, ինչպես նաև՝ այդ տեղեկությունների փոխանցման ժամկետները.

դ) անդամ պետություններում ապրանքների մնացորդները դրոշմավորելու անհրաժեշտությունը՝ ներառյալ ապրանքների մնացորդների դրոշմավորում սահմանելու ժամկետները և ապրանքների մնացորդների դրոշմավորմանը ներկայացվող մյուս պահանջները, կամ՝ այդպիսի անհրաժեշտության բացակայությունը.

ե) դրոշմավորված ապրանքի վերաբերյալ այն տեղեկությունների նվազագույն կազմը, որոնք ներառված են ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգում, և որոնց հասանելիությունը սպառողներին ու այլ շահագրգիռ անձանց տրամադրվում է, ի թիվս այլնի, ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչների ու ինտեգրացիոն բաղադրիչի կազմում տեղեկատվական ծառայությունների միջոցով:

2. Հանձնաժողովի խորհրդի կողմից կոնկրետ ապրանքների կամ ապրանքների խմբերի համար կարող են լրացվել կամ չեղարկվել սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի երեքից յոթերորդ պարբերություններում նշված գործողությունները (շրջանառության փուլերը), որոնց իրականացման դեպքում դրոշմավորված ապրանքների շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մոտ առաջանում է պարտականություն այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմին այդ ապրանքների վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու մասով, որի տարածքում դրանք գրանցված (հավատարմագրված) են:

3. Ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ Հանձնաժողովի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ոչ ուշ, քան այդպիսի որոշումը պաշտոնապես հրապարակելու ամսաթվից 90 օրացուցային օր լրանալուց հետո:

4. Ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ Հանձնաժողովի խորհրդի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են իրենց իրավասու (լիազորված) մարմինների մասին:

5. Միության շրջանակներում ապրանքների դրոշմավորում սահմանելու

ամսաթվից, որոնք դրոշմավորվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, անդամ պետություններն ապահովում են իրենց տարածքներում այդ ապրանքների դրոշմավորումը՝ սույն Համաձայնագրով նախատեսված պահանջներին և դրան համապատասխան Հանձնաժողովի ընդունված ակտերի համաձայն:

Հոդված 6

1. Ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ Հանձնաժողովի խորհրդի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում, սակայն ապրանքների դրոշմավորում սահմանելու օրվանից ոչ ուշ, անդամ պետությունները՝

ա) սահմանում են նույնականացման միջոցների հաշվառման կարգը և (անհրաժեշտության դեպքում) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների իրացման ու հաշվառման կարգը.

բ) ձևավորում են թողարկողների ռեեստրները (անհրաժեշտության դեպքում).

գ) սահմանում են (անհրաժեշտության դեպքում) այն պահեստային տարածքներին ներկայացվող պահանջները, որտեղ դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին թույլատրվում է դրոշմավորել ապրանքները՝ դրանք «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո, և (կամ) որոշում են (անհրաժեշտության դեպքում) այդ պահեստային տարածքների ցանկը.

դ) սահմանում են դրոշմավորման ենթակա ապրանքների արտադրություն և շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև թողարկողների կողմից (անհրաժեշտության դեպքում) իրենց անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին փոխանցվող տեղեկությունների ձևաչափին, կազմին ու կառուցվածքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այդ տեղեկությունները փոխանցելու ժամկետները՝ ի հավելումն Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված պահանջների.

ե) սահմանում են (անհրաժեշտության դեպքում) դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդների դրոշմավորման կարգը՝ ապրանքների մնացորդների դրոշմավորման անհրաժեշտության վերաբերյալ Հանձնաժողովի խորհրդի որոշումն ընդունելու դեպքում.

զ) ի հավելումն սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի երրորդից յոթերորդ պարբերություններում նշված գործողությունների (շրջանառության փուլերի)՝

որոշում են (անհրաժեշտության դեպքում) այնպիսի գործողություններ (շրջանառության փուլեր), որոնց իրականացման դեպքում դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մոտ պարտականություն է առաջանում իրենց անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին այդ ապրանքների վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու մասով, ինչպես նաև սահմանում են այդ տեղեկությունների ձևաչափին, կազմին, կառուցվածքին ու փոխանցման ժամկետներին ներկայացվող պահանջները, եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի խորհրդի կողմից՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան.

է) որոշում են (անհրաժեշտության դեպքում) դրոշմավորված ապրանքների և դրանց նույնականացման միջոցների վերաբերյալ այն տեղեկությունների լրացուցիչ կազմը, որոնց հասանելիության ապահովումը սպառողներին ու այլ շահագրգիռ անձանց ապահովվում է անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների և Հանձնաժողովի կողմից, այդ թվում՝ ապրանքների դրոշմավորման ազգային բաղադրիչների կազմում և տեղեկատվական համակարգի ինտեգրացիոն բաղադրիչի տեղեկատվական ծառայությունների միջոցով.

ը) որոշում են ապրանքների դրոշմավորմանը ներկայացվող այլ պահանջներ ու պայմաններ, որոնք չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին և Հանձնաժողովի՝ դրան համապատասխան ընդունված ակտերին:

Հոդված 7

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին ծանուցում են իրենց տարածքներում այն ապրանքների դրոշմավորում սահմանելու մտադրությունների մասին, որոնք Միության շրջանակներում ենթակա չեն դրոշմավորման, ինչպես նաև ներկայացնում են տեղեկություններ այդպիսի ապրանքների և, եթե հնարավոր է, նույնականացման միջոցների վերաբերյալ, ապրանքների վրա դրանց զետեղման եղանակների և ապրանքների դրոշմավորում սահմանելու ամսաթվի վերաբերյալ:

2. Հանձնաժողովը մեկ կամ մի քանի անդամ պետություններից սույն հոդվածի 1-ին կետում նշված ծանուցումն ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է մյուս անդամ պետություններին և հարցը ներառում է Հանձնաժողովի խորհրդի առաջիկա նիստի օրակարգում:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված ծանուցումն ուղարկելու օրվանից 3 ամսվա ընթացքում Հանձնաժողովի խորհրդի կողմից չի ընդունվում սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝

ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ որոշումը՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, անդամ պետություններն իրենց տարածքներում կարող են սահմանել ապրանքների դրոշմավորում՝ իրենց օրենսդրություններին համապատասխան:

Սույն կետի առաջին պարբերության դրույթները չեն տարածվում ապրանքների այն դրոշմավորման վրա, որը, անդամ պետությունների կողմից, նրանց օրենսդրությանը համապատասխան, կիրառվում է իրենց տարածքներում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ:

4. Նույն ապրանքների առնչությամբ դրոշմավորում սահմանելու՝ երկու և ավել անդամ պետությունների մտադրությունների, ինչպես նաև դրոշմավորում սահմանելիս սույն Համաձայնագրի դրույթներով ղեկավարվելու և իրավասու (լիազորված) մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելու մտադրության դեպքում անդամ պետությունները Հանձնաժողովին կարող են ուղարկել հարցում այդպիսի փոխգործակցություն իրականացնելու համար Միության ինտեգրված տեղեկատվական համակարգն օգտագործելու մասին: Հանձնաժողովի կոլեգիան անհրաժեշտության դեպքում ընդունում է համապատասխան որոշումներ:

Հոդված 8

Ապրանքների դրոշմավորմանը ներկայացվող պահանջները չեն տարածվում՝

Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանելու նպատակով մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների վրա.

մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների վրա՝ դրանց փոխադրման ժամանակ.

Միության մարմինների ակտերի, ինչպես նաև անդամ պետությունների՝ ստանդարտացման ոլորտում նորմատիվ տեխնիկական ակտերի պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով փորձարկումների անցկացման համար նախատեսված՝ ապրանքների՝ անհրաժեշտ քանակությամբ փորձանմուշների ու նմուշների վրա՝ դրանց պահպանության ու փոխադրման ժամանակ.

միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպիչների և մասնակիցների կողմից Միության մաքսային տարածք որպես նմուշներ ու ցուցանմուշներ ներմուծվող ապրանքների վրա, որոնք նախատեսված չեն իրացման (վաճառքի) համար.

անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված՝ օտարերկրյա անհատույց (մարդասիրական) և միջազգային տեխնիկական օգնություն համարվող ապրանքների վրա.

մանրածախ առևտրի շրջանակներում ձեռք բերված և գնորդների կողմից վաճառողներին վերադարձված ապրանքների վրա՝ ապրանքների վերադարձը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում և դրանց՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող պահպանության ու փոխադրման ժամանակ.

ապրանքների վրա՝ անմաքս առևտրի խանութներում դրանց իրացման (վաճառքի) ժամանակ.

մաքսային հսկողության գոտիներում մաքսային հսկողության ներքո, այդ թվում՝ ժամանակավոր պահպանության պահեստներում և մաքսային պահեստներում պահվող ապրանքների վրա.

ապրանքների վրա՝ արտադրողների կողմից դրանց պահպանության ու օգտագործման ժամանակ.

ապրանքների վրա՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների կողմից դրանց պահպանման ժամանակ, որոնք իրականացնում են այն ապրանքների կոմիսիոն առևտուր, որոնք ստացվել են անհատ ձեռներեց չհանդիսացող ֆիզիկական անձանցից՝ այդ ֆիզիկական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա, որն իրականացվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նախքան այդ ապրանքներն իրացման (վաճառքի) համար առաջարկելը, այդ թվում՝ նախքան դրանք իրացման (վաճառքի) վայրում ներկայացնելը, դրանց նմուշները ցուցադրելը կամ իրացման (վաճառքի) վայրում դրանց մասին տեղեկություններ տրամադրելը.

բռնագանձված, կալանքի տակ գտնվող, բռնագրավված կամ այլ ձևով պետության եկամտի վերածված ապրանքների վրա և այնպիսի ապրանքների վրա, որոնց վրա բռնագանձում տարածելն իրականացվում է չկատարված այն պարտավորությունների հաշվին, որոնք նախատեսված են անդամ պետության հարկային և մաքսային օրենսդրությամբ՝ դրանց ձեռքբերման, պահպանության, փոխադրման, իրացման (վաճառքի) և օգտագործման ժամանակ, ինչպես նաև ոչնչացման ենթակա ապրանքների վրա՝ դրանց պահպանության ու փոխադրման ժամանակ.

որպես անձնական օգտագործման ապրանքներ ներմուծված և մանրածախ առևտրի շրջանակներում ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված ապրանքների վրա՝ դրանց պահպանության, փոխադրման և օգտագործման ժամանակ.

դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, միջազգային միջպետական և միջկառավարական կազմակերպությունների, դրանց ներկայացուցչությունների, ինչպես նաև կազմակերպություններում պետությունների ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքների վրա՝ դրանց

պահպանության, փոխադրման և օգտագործման ժամանակ.

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց պատկանող և նրանց կողմից անձնական օգտագործման համար ձեռք բերված ապրանքների վրա՝ դրանց պատասխանատու պահպանման և դրանց իրացման (վաճառքի) հետ չկապված այլ ծառայությունների մատուցման ժամանակ.

միջազգային չվերթեր իրականացնող՝ օդանավով, ծովային և գետային նավերով, ինչպես նաև միջազգային չվերթեր իրականացնող և անդամ պետությունների տարածքների սահմաններից դուրս ձևավորվող գնացքների վագոն-ռեստորաններում, կուպե-բուֆետներում, կուպե-բարերում Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների վրա՝ դրանց պահպանության, փոխադրման, իրացման (վաճառքի) և օգտագործման ժամանակ:

Հոդված 9

Ապրանքների դրոշմավորում սահմանելու օրվանից՝

նույնականացման միջոցների կամ նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների պատրաստում և (կամ) վերարտադրում և (կամ) իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին իրացում (վաճառք) իրականացնող թողարկողներն էլեկտրոնային եղանակով տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում գրանցված (հավատարմագրված) են այդ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, այդ նույնականացման միջոցների և (կամ) նյութական կրիչների պատրաստման և (կամ) վերարտադրման և (կամ) իրացման (վաճառքի) մասին.

Միության մաքսային տարածք այն ապրանքների ներմուծում և (կամ) արտադրություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնց առնչությամբ որոշում է ընդունվել դրոշմավորում սահմանելու վերաբերյալ, այդ ապրանքները սահմանված կարգով դրոշմավորում են նույնականացման միջոցներով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում գրանցված (հավատարմագրված) են այդ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, զետեղված նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների մասին՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, սակայն նախքան այդ ապրանքներն իրացման (վաճառքի) համար առաջարկելը, այդ թվում՝ նախքան դրանք իրացման (վաճառքի) վայրում ներկայացնելը, դրանց նմուշները ցուցադրելը կամ իրացման (վաճառքի) վայրում դրանց մասին տեղեկություններ տրամադրելը.

դրոշմավորված ապրանքների անդրսահմանային առևտուր իրականացնող իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերն էլեկտրոնային եղանակով տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում իրենք գրանցված (հավատարմագրված) են, այդպիսի առևտրի շրջանակներում ձեռք բերված ապրանքի վրա սահմանված կարգով զետեղված նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների մասին՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, սակայն նախքան այդ ապրանքներն իրացման (վաճառքի) համար առաջարկելը, այդ թվում՝ նախքան դրանք իրացման (վաճառքի) վայրում ներկայացնելը, դրանց նմուշները ցուցադրելը կամ իրացման (վաճառքի) վայրում դրանց մասին տեղեկություններ ներկայացնելը.

այն դեպքում, երբ նախատեսված է դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդների դրոշմավորում, այդպիսի ապրանքների մեծածախ և (կամ) մանրածախ առևտուր իրականացնող իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերն այդ ապրանքների մնացորդները սահմանված կարգով դրոշմավորում են նույնականացման միջոցներով և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչներով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում իրենք գրանցված (հավատարմագրված) են, զետեղված նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների մասին՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, սակայն նախքան այդ ապրանքներն իրացման (վաճառքի) համար առաջարկելը, այդ թվում՝ նախքան դրանք իրացման (վաճառքի) վայրում ներկայացնելը, դրանց նմուշները ցուցադրելը կամ իրացման (վաճառքի) վայրում դրանց մասին տեղեկություններ ներկայացնելը.

գնորդների կողմից վերադարձված, դրոշմավորման ենթակա ապրանքների առևտուր և (կամ) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքած պայմանագրերի հիման վրա ապրանքների կոմիսիոն (հանձնուրդային) առևտուր իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, նախքան այդ ապրանքներն իրացման (վաճառքի) համար առաջարկելը, այդ թվում՝ նախքան դրանք իրացման (վաճառքի) վայրում ներկայացնելը, դրանց նմուշները ցուցադրելը կամ իրացման (վաճառքի) վայրում դրանց մասին տեղեկություններ ներկայացնելը, սահմանված կարգով դրոշմավորում են այդ ապրանքները նույնականացման միջոցներով և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչներով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում իրենք գրանցված (հավատարմագրված) են, զետեղված նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ

պարունակող նյութական կրիչների մասին.

դրոշմավորված ապրանքների մանրածախ առևտուր իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերն այդպիսի առևտրի շրջանակներում իրացված (վաճառված) ապրանքի վրա զետեղված նույնականացման միջոցների և (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում իրենք գրանցված (հավատարմագրված) են, եթե այդպիսի տեղեկացումը նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում իրենք գրանցված (հավատարմագրված) են:

Հոդված 10

1. Անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինները անդամ պետությունների հսկողություն իրականացնող և (կամ) իրավապահ այլ մարմինների հետ միասին ապահովում են դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Սույն Համաձայնագրի կատարման նկատմամբ մշտադիտարկում և հսկողություն, անդրսահմանային առևտրի ժամանակ ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների և դրանց նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը սպառողներին ու այլ շահագրգիռ անձանց ապահովելու նպատակով ապահովվում է տեղեկատվական փոխգործակցություն անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջև և անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների ու Հանձնաժողովի միջև՝ ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի շրջանակներում:

3. Անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջև և անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների ու Հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցությունն ապահովվում է ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչների և ինտեգրացիոն բաղադրիչի փոխգործակցության միջոցով՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցների օգտագործմամբ:

4. Դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով անդամ պետություններն իրենց օրենսդրության մեջ պատասխանատվություն են նախատեսում սույն Համաձայնագրով սահմանված պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հոդված 11

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից դրա դրույթները տարածվում են «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ բնական մորթուց» (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4303 10 901 0 — 4303 10 906 0 և 4303 10 908 0 ստորաենթադիրքեր) ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման վրա:

2. Հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորումն ըստ «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ բնական մորթուց» (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4303 10 901 0 — 4303 10 906 0 և 4303 10 908 0 ստորաենթադիրքեր) ապրանքային դիրքը կարգավորող Հանձնաժողովի որոշումները, որոնք գործում են սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, պահպանում են իրենց իրավական ուժը և կիրառվում են սույն Համաձայնագրին չհակասող մասով:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից դադարում է հետևյալ միջազգային պայմանագրերի գործողությունը.

««Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքով հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագիր.

««Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքով հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» 2016 թվականի նոյեմբերի 23-ին ստորագրված արձանագրություն:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 13

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և կազմում է Միության իրավունքի մաս:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի կողմից ստանալու օրվանից 10 օրացուցային օր հետո:

Կատարված է Ալմաթի քաղաքում 2018 թվականի փետրվարի 2-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի փետրվարի 2-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն